ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 1-ին, շաբաթ, Ս. Սահակ Պարթև Հայրապետի տոնի օրը, Արմավիրի թեմի Ս. Աստվածածին եկեղեցում, ձեռամբ թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի, տեղի ունեցավ չորս ընծայացուների՝ Կարեն Մանուկյանի, Կարապետ Խաչիբաբյանի, Արտակ Ալեքսանյանի և Կարեն Մանուկյանի սարկավագական ձեռնադրությունը /խարտավիլակ Տ. Խորեն քահանա Մարուքյան/:

Շաբաթ օրը, առավոտյան ժամերգությունից հետո, գերշ. Սրբազան Հայրը կատարեց նորընծաների կոչման արարողությունը և Ձեռնադրության Մաշտոցի համաձայն տվեց «պաշտօն փոքր սարկաւագութեան», որից հետո, հընթացս Ս. Պատարագի, սկսվում է բուն ձեռնադրության արարողությունը: Խարտավիլակ արժանապատիվ Տ. Խորեն քահանան դիմում է սրբազանին «ի ձայն բարձր, զի կիսասարկաւագունս զորս ընծայէ քեզ, ձեռնադրեսցես մեզ ի սարկաւագ»:

Ապա ձեռնադրող Սրբազանը հարցեր է տալիս նորընծաների հոգևոր արժանավորության և կենցաղի սրբության մասին:

Խարտավիլակի դրական պատասխանից հետո ձեռնադրող սրբազանն ասում է. «Կոչեմք զկիսասարկաւագունս ի պաշտօն սարկաւագութեան»: Ապա նվիրյալները ծնրադիր մոտենում են ս. սեղանին:

Ձեռնադրող սրբազանը «զաջն ի վերայ նուիրելոցն» դնելով կարդում է ձեռնադրութեան մեծ աղոթքը:

Գեղեցիկ է այն պահը, երբ նորընծաները, ի նշան աշխարհից հրաժարման, դառնալով «յարևմուտս», «զձեռս ի վեր ափ ի բաց» բարձրացնում են, մինչև դպրաց խումբը երիցս երգում է «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականը, իսկ ժողովուրդը միաբերան վկայում է. «Արժանի են»:

Ապա նորընծաները բոլորակի շարվում են ձեռնադրող Սրբազանի շուրջ, որ, «զաջն ի վերայ գլխոյն» դնելով, յուրաքանչյուրին ասում է. «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի զաստիճան սարկաւագության անարատ պաշտել առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ»: Սարկավագների ձեռնադրության հուզիչ արարողությունը վերջանում է ձեռնադրող Սրբազանի «Պահպանիչ» աղոթքով: Այնուհետև շարունակվում է պատարագը. օրվա պատարագիչն է արժանապատիվ Տ. Մկրտիչ քհն. Մուշատյանը:

Նորընծաներ Կարեն սրկ. Մանուկյանը, Կարապետ սրկ. Խաչիբաբյանը, Արտակ սրկ. Ալեքսանյանը և Կարեն սրկ. Մանուկյանը իրենց հոգևոր ծառայությունը շարունակելու են Արմավիրի թեմում:

***

Հաջորդ օրը նույն եկեղեցում կատարվեց նորընծա սարկավագներից երկուսի՝ Կարապետ և Արտակ սարկավագների քահանայական ձեռնադրությունն ու օծումը: Առավոտյան ժամերգությունից հետո կատարվում է քահանայական կոչման արարողությունը, որի ընթացքում ընծայացուները ուխտում են հեռու մնալ և հրաժարվել հերձվածողներից և հետևել Եկեղեցու սուրբ հայրերին: Այնուհետև սկսվում է սուրբ պատարագը, /պատարագիչ Մայր Աթոռի միաբան Տ. Բաբկեն

աբդ. Սալբյան, խարտավիլակ Տ. Խորեն քհն. Մարուքյան/: Սուրբ Պատարագը շարունակվում է մինչև «զի ողորմած և մարդասէր ես Աստուած» և ապա, «Այսօր աստուածութիւնն զուարճանայ» շարականով ընծայյալները ձախակողմյան դասից ծնրադիր բարձրանում են դեպի Ս. Սեղան:

Ջեռնադրության պատշաճ և գեղեցիկ սաղմոսների, աղոթքների և երգերի միջոցով ձեռնադրող Սրբազանը հայցում է «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ», որից հետո ընծայալները հրապարակավ միանգամ ևս տալիս են իրենց անձի վկայությունը սիրով, ազատ կամքով քահանայության քաղցր լուծը ստանձնելու համար:

Այնուհետև Սուրբ Պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն»-ի պահը: Մեծ և բովանդակալից աղոթքների ընթերցումից հետո ձեռնադրող Սրբազանը «արկանէ զփիլոնն», «դնէ զսաղաւարտն ի գլուխ», «զգեցուցանէ զշուրջառն», «կապէ զգօտին» ընծայալների, տալով նրանց քահանայության իշխանություն:

Ապա «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողությամբ մկրտության Սուրբ Ավազանից հանդիսավոր կերպով բերվում է Սրբալույս Մյուռոնը, որից հետո Սրբազանը վերցնելով Մյուռոնը «Օծանէ սրբազան միւռոնաւ զճակատ» և ձեռքերը նորընծաների, վերանվանելով Կարապետ սրկ. Խաչիբաբյանին՝ Տ. Կարապետ քահանա, Արտակ սրկ. Ալեքսանյանին՝ Տ. Հովսեփ քահանա:

Այնուհետև Սրբազան Հայրը հանդիսավոր աղոթքով և օրհնությամբ ընծայյալներին հանձնում է սկիհը, մաղզման և բուրվառը ու հրամայում նրանց առաջին անգամ օրհնել հավատացյալներին:

Զափազանց հուզիչ էր և սրտագրավ այն պահը, երբ նորընծաները, օրհնելով հավատացյալներին, բարեմաղթում են «Խաղաղութիւն ամենեցուն»:

Նորընծաների այս օրհնությամբ էլ վերջանում է օծման սուրբ արարողությունը:

Վերջում գերաշնորհ Սրբազան Հայրը իր հայրական պատգամն է ուղղում նորընծաներին, նրանց հարազատներին և հավատացյալ ողջ ժողովրդին:

ԴԻՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ